

— ոչ իսկ Դիզրայէլի մէկ սպառնալից ճառը : Ցարը հրամայեց զօրաշարժ :

Եւ ռուսէն կառավարութեան հետ բանակցութեան մտաւ, որպէսզի թոյլ տայ ռուս բանակը փոխադրելու Ռուսմանիոյ վրայով դէպի Բուլղարիա : (Այս երկիրը առանձնապէս կը հետաքրքրէր ռուսներուն, վասնզի փոռած էր «Ցարգրազէ» դուռներուն...) : Միւս կողմէն բանակցութիւն սկսեց Աւստրիոյ հետ, զայն չեզոքացնելու նպատակով : Ատոր հետեւանքն եղաւ 1877 թ. յունիս 15-ի դադտնի համաձայնութիւնը, որով Աւստրիան կ'արտօնուէր՝ խաղաղութիւնը կնքուելէ յետոյ՝ դրաւելու Բոսնիա-Հերցեգը, իրբեւ գին իր չեզոքութեան :

Ըստ երեւոյթին, դէպքերը կ'ընթանային իրենց անխուսափելի ճամբով եւ պատերազմէն դուրս ուրիշ ելք չկար : Սակայն, Դիզրայէլի, թիւրքահայտակ քրիստոնեաներու այդ շարհրեշտակը, վերստին միջամտեց, առաջադրելով Պետերբուրգի կառավարութեանը ռէֆորմներու նոր ծրագիր մը, որ պիտի քննուէր գալիք խորհրդաժողովի մէջ : Ցարը ընդունեց այդ ծրագիրն եւս եւ խորհրդաժողովը տեղի ունեցաւ Կ. Պոլսում, 1876 թ. 23 դեկտեմբերի : Թիւրքիոյ ներկայացուցիչը չկար հող : Ան կանչուեցաւ խորհրդակցութիւնները վերջանալէն յետոյ : Եւ երբ յանուն պետութիւններու, Քրանսական դեսպանը յանձնեց թիւրք նախարարին խորհրդաժողովի որոշումները, յանկարծ թնդանօթները որոտացին...

Սելվէթ փաշա հանդիսաւոր ձեւով վերբարձրացաւ տեղէն եւ ասաց .

— «Այդ թնդանօթի հարուածները կը ծանուցեն, թէ սուլթանը սահմանադրութիւն մը շնորհէր է կայսրութեան : Այդ աքար կը փոխէ կառավարութեան մը ձեւը, որ տեւեր է 600 տարի եւ նոր դարազուլիս մը կը բանայ օսմանեան ժողովուրդներու բարօրութեան համար»...

Միթհադ փաշայի գործն էր այդ յանդուզն գաւեշտը, որով նա կ'ուզէր թող փչել Եւրոպայի աչքին... Թիւրքական այդ սահմանադրութեամբ ամենէն առաջ կը հռչակուէր «կայսրութեան անբաժանելիութիւնը», ամբողջութիւնը :

Բաւական ազատաշունչ Սահմանադրու-

թիւն մըն էր, Խորհրդարան, նախարարներու պատասխանատուութիւն, խօսքի, մամուլի ազատութիւն եւայլն, եւայլն — նման արեւմտեան Սահմանադրութիւններուն :

Այդ գաւեշտէն յետոյ եւս, դեսպանները, այնուամենայնիւ, վիճարանութեան մտան թիւրք նախարարներուն հետ : Կը պահանջէին լուրջ երաշխիքներ, իսկ թիւրքերը անոնց բոլոր պահանջներուն հանդէպ մէկ պատասխան մ'ունէին — Օսմանեան Սահմանադրութիւնը... :

Եւրոպական «Համերգը» դարձեալ կը կադար, պետութիւնները դարձեալ անհամերաշխ էին, ոչ մէկը, բացի Ռուսիայէն, չէր ուզեր դիմել լուրջ ու ազդու միջոցներու :

1877 յունուար 20-ին Պոլսոյ այդ արգահատելի խորհրդաժողովը ցրուեցաւ, Եւրոպայի դեսպանները մեկնեցան թիւրքերու հեզնական քրքիջներու մէջ... Սքանչելիօրէն Միթհադի խումբը խաղաց Եւրոպայի հետ, ամենաչնչին գիջումն իսկ չընելով անոր : Անգլիա ոչինչ կ'ուզէր ընել, Ֆրանսա տկարացած իր պատերազմներէն՝ նմանապէս, իսկ Գերմանիա Բիսմարկի բերնով կը յայտարարէր, թէ «արեւելեան բոլոր խնդիրները չարժեն պոմէրանեան զինուորի մը ոսկորները»...

Դարձեալ ռէֆորմներու գործը կը ձգձրգուէր :

(Նոյն անվերջ ձգձրումները՝ ինչ որ յունական, կրետական, հայկական ու մակեդոնական ճգնաժամերու տեսն... Միայն բալկանեան ժողովուրդները ունեցան գէթ մէկ հատիկ հզօր պաշտպան, եւ անգամ Մակեդոնիան ունէր իր ետեւը Բուլղարիա մը, մինչ Հայաստանը — ոչ ոք...):

Նորէն բանակցութիւններ՝ Ռուսաստանի նախաձեռնութեամբ : Անոնք յանգեցան Լոնտոնի պրոտօկոլին. «Պետութիւնները կ'արձանագրեն սուլթանի խոստումները եւ յանձնառու կը լինին հսկելու անոնց գործադրութեան վերայ»...

Թիւրքիան առ ալ մերժեց : Ապրիլ 11-ին (1877 թ.) օսմանեան Խորհրդարանը կ'որոշէ շարունակել պատերազմը բալկանեան երկիրներու դէմ եւ յետ կը մղէ Լոնտոնի պրոտօկոլը այս բառերով .